

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

_____ 200_ թ.

_____ ի դեմս _____ գործող
_____ հիման վրա (այսուհետև՝ ՆԵՐԴՐՈՂ), մի կողմից և
_____ բնակվող
_____ շրջանի _____ գյուղում (այսուհետև՝ ՄԱՍՆԱԿԻՑ)
մյուս կողմից, Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական
կազմակերպությունների միության ««Երկիր» հիմնադրամ» ծրագրի շրջանակներում կնքեցին
սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմանագրով ՆԵՐԴՐՈՂԸ պարտավորվում է ՄԱՍՆԱԿԻՑԻՆ տրամադրել _____
տեսակի ոչխարներ՝ _____ հատ մաքի _____ հատ խոյ, _____ գառ,
_____ ընդհանուր արժեքով, իսկ ՄԱՍՆԱԿԻՑԸ
պարտավորվում է ընդունել նշված անասունները և օգտագործել սույն պայմանագրում նշված
նպատակներին հասնելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՆԵՐԴՐՈՂԸ պարտավորվում է.

2.1.1. ՄԱՍՆԱԿԻՑԻՆ անասունները տրամադրել առողջ վիճակում:

2.1.2. ՄԱՍՆԱԿԻՑԻ կողմից բարեխիղճ կերպով իր պարտականությունների կատարման դեպքում
երկարացնել պայմանագրի գործողության ժամկետը ևս մեկ տարով:

2.2 ՄԱՍՆԱԿԻՑԸ պարտավորվում է.

2.2.1. ՆԵՐԴՐՈՂԻ տրամադրած անասունները պահել բարեխիղճ ձևով, ժամանակին կատարել
անասնաբուժական բոլոր միջոցառումները:

2.2.2. Սույն պայմանագրի ժամկետը լրանալուց ՆԵՐԴՐՈՂԻՆ հանձնել _____ հատ մաքի,
_____ հատ խոյ, _____ հատ գառ:

2.2.3. Պայմանագրի առարկա հանդիսացող անասունները պայմանագրի գործողության
ընթացքում գրավ չդնել, չհանձնել այլ կողմի, չվաճառել կամ այլ եղանակով չօտարել
առանց ՆԵՐԴՐՈՂԻ համաձայնության:

2.2.4. ՆԵՐԴՐՈՂԻ պահանջով անմիջապես ներկայացնել պայմանագրի առարկայի հետ
առնչություն ունեցող բոլոր փաստաթղթերը:

2.2.5. Եռամսյակը մեկ անգամ ՆԵՐԴՐՈՂԻՆ ներկայացնել պայմանագրի մասին հաշվետվություն:

2.2.6. Երրորդ կողմի հետ որևէ համաձայնության գալու դեպքում, որը առնչություն կունենա
պայմանագրի առարկայի հետ, հայտնել ՆԵՐԴՐՈՂԻՆ:

2.2.7. Պայմանագրի առարկային վերաբերվող անասուններին վնաս սպառնալու և կամ վնասելու
դեպքում անհապաղ հայտնել ՆԵՐԴՐՈՂԻՆ, ընդ որում դա չի ազատում ՄԱՍՆԱԿԻՑԻՆ իր
պայմանագրային պարտավորությունների կատարումից, մասնավորապես 2.2.2. կետով
նախատեսված:

2.2.8. Սույն պայմանագրի 2.2.2. կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու
դեպքում շուկայական արժեքով դրամական փոխհատուցում տալ չհանձնված անասունների
դիմաց:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1 ՆԵՐԴՐՈՂԸ իրավունք ունի.

3.1.1. Վերահսկել ՄԱՍՆԱԿՑԻ գործողությունները, նաև հրավիրված մասնագետների միջոցով:

3.1.2. Պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած ժամանակ ստուգել կատարվող աշխատանքների ընթացքը:

3.2. ՄԱՍՆԱԿԻՑԸ իրավունք ունի.

3.2.1. Իր պայմանագրային պարտավորություններից դուրս ստացած արտադրանքը տնօրինել իր հայեցողությամբ:

3.2.2. Պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ կատարել պայմանագրի թիվ 2.2.2. կետով ստացված պարտավորությունները (նշված դեպքում պայմանագիրը համարվում է լուծարված):

3.2.3. Պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ լուծարել պայմանագիրը 1.1. կետում նշված անասունների արժեքի և պայմանագրի ուժի մեջ մտնելու օրից հաշվարկված յուրաքանչյուր օրվա դիմաց 0,1% տուգանքի վճարելով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Սույն պայմանագրի 2.2.2. կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում ՄԱՍՆԱԿԻՑԸ պատասխանատվություն է կրում իր ունեցած ամբողջ գույքով:

4.2. ՄԱՍՆԱԿԻՑԸ անասունները սահմանված ժամկետում չվերադարձնելու դեպքում ՆԵՐԴՐՈՂԻՆ վճարում է տուգանք յուրաքանչյուր ուշացած օրվա հա-մար չվերադարձված անասունների շուկայական արժեքի 0,1 % - ի չափով:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած վեճերը կարգավորվում են կողմերի բանակցությունների միջոցով, իսկ փոխհամաձայնության չգալու դեպքում՝ գործող օրենսդրության համաձայն:

5.2. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր կողմի մոտ մեկ օրինակ:

5.3. Անասունների հանձնում – ընդունումը կատարվում է համապատասխան ակտերով, որոնք կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում անասունների հանձնման - ընդունման պահից:

6.2. Սույն պայմանագիրը կնքվում է երկու տարի ժամկետով:

6.3. Պայմանագիրը կարող է դադարեցվել.

6.3.1. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6.3.2. Պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում:

6.3.3. Սույն պայմանագրի 3.2.2. կետի համաձայն:

6.3.4. Միակողմանի ՆԵՐԴՐՈՂԻ կողմից, եթե ՄԱՍՆԱԿԻՑԸ խախտել է 2.2.1. կետը, ընդ որում ՄԱՍՆԱԿԻՑԸ պարտավոր է վերականգնել ՆԵՐԴՐՈՂԻ կրած վնասները:

6.4. Պայմանագիրը կարող է երկարացվել 2.1.2. կետի համաձայն:

ԿՈՂՄԵՐ

ՆԵՐԴՐՈՂ

ՄԱՍՆԱԿԻՑ

անձնագիր

(հասցե)

ԱԿՏ

ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

_____ հանձնում է, իսկ _____
_____ ընդունում է _____ հատ ոչխարներ, ըստ ներքո-
բերյալ ցուցակի, որը պարտավորվում է պահել համաձայն _____ 200 թ.
_____ գյուղում կնքված պայմանագրի _____

Գառներ

- Մաքիներ՝ 1-ից 2 տարեկան
- 2-ից 3 տարեկան
- 3-ից 4 տարեկան
- 4-ից 5 տարեկան
-
- ընդ. 1-ից 5 տարեկան
- 5-ից բարձր
- ընդամենը՝ մաքիներ

Խոյեր

- Խոյիկներ մինչև 1 տարեկան
- Ընդամենը՝ ոչխարներ

ՀԱՆՁՆՈՂ

ԸՆԴՈՒՆՈՂ

Գառներ	Մաքիներ					Խոյեր	Խոյիկներ մինչև 1 տար.
	1-2 տարեկան	2-3 տարեկան	3-4 տարեկան	4-5 տարեկան	5 և ավելի տար.		